

տան, հետևի, երեսկահատ, պատա-
ծակ, սուել, պաշկած, առտասան,
սոթտած, լացակումած և այլն, ժո-
ղովրդական դարձածներ, ինչպես
են. կորկոտ գցել, հալի չէն
են չինել, օձը բնից հանող, խօսքը
չուանի դնել և այլն. սակայն չէ կա-
րելի ասել թէ նա միշտ չաջողեցրել
է նոցա դործածելու տեղին. Առհա-
սարակ վէպը թէ ոճի և թէ բառերի
կողմից միապաղաղ գրածքի տպա-
ւորութիւն չէ անում. տեղ-տեղ նա
չատ է մօտենում հասարակ ժողո-
վրդական լեզուին, իսկ տեղ-տեղ նա
ալնքան ղուտ գրական է դառնում,
որ արդէն չէ սաղում վէպի ընդհա-
նուր բնավորութեան. Խորթ ևն
թուում. հոռ, խէ, վեր դառնանք
(պառկենք) և սոցա նման բառերը
գրական լեզուի մէջ: Անխտիր գործ
են ածւտած աչս և էս ձևերը միևնույն
տեղում: Երես 48-ում «առաւօտ» և
«գիշեր» ը մտել են մի նկարագրու-

թեան մէջ անլարմար կերպով, երես
52-ում գործ է ածւած «թալիշ» բառը,
որ իբրև նորեկ սխեմանցիների ասած
խօսք անտեղի է: Կացիր (կաց),
արթնեցաւ (ղարթնեց) և այդ տեսակ
բառերը մնասում են լեզուի ստիւ-
թեանը:

Այնպիսի չաջողած գլուխներ,
ինչպես են վեցերորդ, եօթներորդ,
տասներորդ և մի քանի ուրիշները
գրածքի (որի մէջ երևում են ու-
սումնասիրութիւն և դիտողութիւն)
ընդհանուր բնավորութեան հետ միա-
սին դարձնում են վէպը հետաքրքրա-
կան և իբրև գրական երևոյթ ար-
ժանի գնահատութեան. Յանկալի է,
որ հեղինակը և ապագայում իւր
նիւթը առնէր ժողովրդից, չօշափելով
նորա կեանքի աջակիսի կողմերը,
որոնք տալիս են մեզ հասարակա-
կան մտածողութեան նիւթ:

Ա. Բլ.

ՍԱԿԱՆԻՆԻ, ԳՈՒՍՏԱԻ. — «Զինական եղինջի մշակութիւնը» Հրատա-
րակութիւն գնդապետ Ալեքսանդր Թովմ. Մելիք-Հայկազեանի, Թիֆ-
լիս, 1888 թ., տպ. Մ. Վարդանեանի. ութածալ, 17 երես, տառ
№ 12: Գինը՝ ձրի:

«Ահա մի քանի տարի է ինչ եր-
կու կխաղենք ռուսականներին
սկսել է զբաղեցնել մի բոլս, որին
մեծ ապագալ է վիճակած. ալդ՝ չի-
նական եղինճն է:

«Այդ թել չինելու և մանելու հա-
մար չարմար բոլսը կարող է հարս-
տութեան մի նոր աղբիւր դառնալ՝

առանց այն էլ հարուստ կովկասի
համար:

«Փորձերի վերաջ հիմնելով՝ եղին-
ճի համար բոլորովին պիտանի է ճա-
նաչւած կովկասի թէ հողը և թէ
կլիման:

«Այս բոլսը, որ կովկաս բերեց
առաջին անգամ 1862 թւին, հիա-

Նալի կերպով աճեց և կարող եղաւ եղանակի ամեն տեսակ փոփոխութիւններին դիմանալ:

«Թէպէտ և եղինճի հալոնիքը Ասիայի արևելեան երկիրներն են, բայց և այնպէս նա ընդունակ է ընտելանալու նաև պակաս տաքութիւն ունեցող կլիմային:

«Այս բոլոր եղինճի դասակարգին է պատկանում: Բուսաբանները դորան անուանել են *hochmeria urtica*.

«Ասիայում այս բոլոր *chin grass* է կոչուում, Ֆրանսիայում *ramie* (ռամի) որ ընդունած է ամբողջ Եւրոպայում, Աւստրիայում, Եգիպտոսում և մինչև անգամ Կովկասում: Իսկ Չինաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում և Նիդերլանդներն իշխանութիւններում բաւական է դանդաղ անուններով:

«Անհերքելի է, որ եղինճի նրբաթելերը գերազանց են թէ վուշի, թէ կանեփի և թէ բամբակի նրբաթելերից. այնպէս որ աւելորդ խառնուրդները ջոկելուց քիտոյ, հիանալի մանած է ստացւում, և բաղի ալդ եղինճի թելերն աւելի երակարաւուն, մե-

տաքանման, փալլուն և առաձգական են, և բոլոր մանեկներին՝ կարելի է ասել, եղինճն աւելի մօտ է մետաքսին:

«Սղուրգէթի Նահանգի մէջ իշխան Գրիգոր Գուրիէլու կալածներում եղինճի մշակութեան համար արած փորձերը, որոնք առաջին և լուրջ կերպով մշակածը կարելի է համարել, եթէ չը լաջողեցան, դորա միակ պատճառը պէտք է համարել պ. Մարկի վաղահաս մահը, որ չը թողեց նրան իւր աշխատանքի պտուղը վախել: Իսկ պ. Մարկից քիտոյ չը դառնեց մէկը, որ լանձն առնէր ալդ հարստութեան մի նոր աղբիւր խոստացող ժառանգութիւնը»:

Համառօտակի ապացուցանելով, թէ եղինճի արդիւնաբերութիւնը կարելի է նաև Կովկասում, հեղինակը կարճառօտ կերպով բացատրում է նորա մշակման միջոցները, նորանից նրբաթելեր ստանալը, նորա արդիւնաբերութիւնը և այն առաւելութիւնները, որոնցով նա գերազանցում է միւս բոլոր մանեկներին:

Ն.—

(ԻէՅ)՞, ղօքտօր.—Չինուորների ամենասովորական աչքացաւն ու նրանից հեռու մնալու միջոցները. կազմեց դ.-ր Լէյլա, ակնարոցժ Կովկասեան զինուորական շրջանի: Իշխանութեան Թոյլտուութիւնով հրատարակութիւն գնդապետ Մելիք-Հայկազեանի: Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի 1888 թ., ութածալ, 34 երես, առա Ք 12. գինը ձրի:

«Ջօրքերի մէջ երևացող աչքացաւի դէմ շատ միջոցներէ մինն էլ, անկասկած, նրանցում օդտակար

մտքեր տարածելն է, թէ ինչ են ալդ հիւանդութեան պատճառները և թէ որոնք այն միջոցները, որոնցով կա-